

ՓԱՇՈ ԱՎԱԳՅԱՆ

ՄԵՐ ԿՈԼԵՈԶԻ  
ՄԵՂԱՍՏՈՅԵ

891.99 ԱՐ

Ա-77

ՊԵՏՏՐՈՒՏ

2011-05

Հ ա ր մ - ք  
2141

881. 995

Ա հ . 77


ՓԱՇՈ ԱՎԱԳՅԱՆ

# ՄԵՐ ԿՈԼԻԽՈԶԻ ՄԵՂՎԱՆՈՑԸ

ՆԿԱՐՆԵՐԸ  
Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ



ԹԵՏՏԱՐԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՏԵՐԵՎԱՆ  
1939



\* \* \*

Դուք ամեն որ քաղցր, անուշ,  
Մեզը եք ուտում համով, հոտով;  
Ո՞վ ե տալիս այդ քաղցրանուշ  
Բարիքն առատ քաղցր հյութով:

Ո՞վ ե շինում բարիքը այդ  
Աշխատավոր մարդկանց համար,  
Կամ թե ի՞նչպես և ի՞նչ նյութից,  
Այդպես մաքուր, այդպես արդար:

Դուք փոքրիկ եք ու շատ խելոք,  
Շարքով նստեք դուք միասին  
Ու լավ լսեք, իսկ յես հիմա  
Պիտի պատմեմ մեղվի մասին:

## П. АВАКЯН ПАСЕКА НАШЕГО КОЛХОЗА

Гиз Арм. ССР, Ереван, 1939



59986 - 66

\* \* \*


Մեր կոլխադը ունի դաշտեր,  
Մարգագետին լայն, ծաղկավետ,  
Հազար գույնի ծաղիկներով,  
Տեսակ-տեսակ ու բուրավետ:

Յերբ բացվում ե անուշ գարուն,  
Բալասան ու նարգիզ, կակաչ  
Վառ գույներով շողշողում են,  
Մեր արտերում պայծառ, կանաչ:

Մարեր, դաշտեր ծաղկով զարդով,  
Ինչպես առատ մի ծաղկանոց...  
Հենց այդ դաշտի հարմար տեղում  
Կոլխոզն ունի մի մեղվանոց:

Կոլխոզն ունի մի բրիգադ՝  
Կա մեղվապահ, հյուսն, վարպետ,  
Ավագն ե ընկեր Սենոն,  
Վորպես մեղվի լավ մասնագետ:

Հենց փշում ե հովը գարնան,  
Հոտ ե փշում կանաչ դաշտից,  
Փեթակները շարան-շարան  
Դուրս են տանում մեծ պահեստից:



Ու ծաղկավետ մեղվանոցում  
Փեթակներն են շարում կարգով,  
Ծաղիկների հովերի միջում  
Չափած, ձևած, ուղիղ շարքով:

Ո՞վ ե տեսել այսքան փեթակ,  
Մեղուների այսքան տնակ...  
Նրանց թիվը անցյալ տարի  
Հասավ ուղիղ մեկ հազարի:

Ամեն փեթակ մի-մի կոլխոզ,  
Սարքավորված մի գործարան,  
Ցեխ, բրիգադ, ամբողջ համայնք,  
Մեղրով լիքը շտեմարան:

Փեթակում կան շատ մեղուներ,  
Խելք, խոհեմ, իրար նման,  
Մի մոր ծնունդ, անգին քույրեր,  
Քաղցր սիրով, անդավաճան:

\* \* \*

— Դե, տղերք ջան, շարքը պրծանք, —  
Չայն ե տալիս ընկեր Մենոն —  
Շտապ բացեք մեղվի դռւուր,  
Իսկ ձեզ կողնի քեռի Բենոն:

Ու բգալով, տպտղալով,  
Գարնան ծաղկի հոտը առած,  
Դուրս են գալիս փեթակներից  
Մեղուները շարան կապած:

Այնքան ել շատ ու անհամար,  
Թուչում են աջ, թուչում են ձախ,  
Շտապ-շտապ գործի համար  
Միշտ համարձակ ու միշտ անվախ:

Մեղուները անխոնջ մշակ,  
Ամեն մեկը պեծ ու կրակ,  
Հայ տպտղում, բզզում են,  
Դաշտերով մեկ վազվղում են:

Աչիկներով վառ, սրատես,  
Թեկներով նուրբ, սրբնթաց,  
Չափչփում են այգի, պարտեզ,  
Ծաղիկներ են փնտուում բացված:

Նստում են խառ ծաղկի վրա,  
Հոտոտում են սուր քթիկով,  
Ու ցողապատ ծաղկի փոշուց  
Ծաղախ շինում նուրբ վոտիկով:

Ամեն ծաղկի խորունկ ակից  
Մեղը են ծծում պուտիկ-պուտիկ,  
Հազար ծաղկի մոտ են դնում,  
Լցնում բերան ու փորոտիք:

Հազար ծաղկից հոտ են առնում,  
Հազար ցողից հյութ հավաքում,  
Բեռլ անգին, քաղցր վաստակ,  
Արագ-արագ վազում փեթակ:

Ինչքան հեռու գնա մեղուն,  
Չի մոլորի իրա ճամբան,  
Յետ ե զառնում բերքով բեղուն,  
Ուրախ, զվարթ ու ժրաշան:

Բերում են հյութ, ծաղկի փոշի,  
Մոմ են շինում՝ դեղին վոսկի,  
Իսկ հյութիցը՝ մեղը անգին  
Քաղցր, համով շատ թանկագին:

\*  
\* \*

Իսկ փեթակում անթիվ մեղու,  
Չկա մեկը առանց արհեստ,  
Շինում են նուրբ մոմաթերթից  
Մեղի համար անթիվ պահեստ:

Աշխատանքի խիստ բաժանում,  
Ամեն մեկը մի մասնագետ՝  
Զրկիր, շարող, չափող, տեխնիկ,  
Ավագ վարպետ, տնտեսագետ.

Ծաղկից ծծած հյութը անգին  
Դատարկում են կարգով, հերթով,  
Մոմից շինած փոսիկներում  
Ու սվաղում մոմաթերթով:

Իսկ մայր մեղուն որոր-շորոր,  
Ցուցումներ ե տալիս վեր, վար,  
Յեվ դիտում ե գործը բոլոր,  
Վորպես հմուտ լավ ղեկավար:

«Ինչ վոր ասի մայրիկ մեղուն,  
Մի որենք ե, հաստատ կանոն»,  
Այդ մեզ պատմեց մեր մեղվապահ  
Բրիգագիր ընկեր Սենոն:

Մոմե փոքրիկ փոսիկներում  
Չու ե ածում մայրիկ մեղուն,  
Յեվ ձվերը խնամում են  
Աշխատանքով բազմաբեղուն:

Այդ ձվերից, տասն որ հետո,  
Դուրս են գալիս նոր մեղուներ,  
Առույգ, զվարթ ու թովան,  
Հոծ բանակի քաջ զինվորներ:

Պահակներ կան անվախ, արթուն,  
Մուտքի առաջ միշտ պահապան,  
Թե թշնամին ներս գա թագուն,  
Հոծ խմբերով վրա կտան:

Ունեն որենք ու դատաստան,  
Մի կոմունա՝ մի մեղվաստան,  
Աշխատում են մայր ու վորդի,  
«Ով աշխատի՝ նա յել կուտի»:

\* \* \*

Փեթակում կան նաև բոռեր,  
Արուներ են ասում դրանց,  
Հենց մայր մեղուն բեղմնավորվեց,  
Համարում են գործը պրծած:

Աներես են այդ բոռերը,  
Զրիակեր, գոռող, տողած,  
Ամբողջ որը մրափում են  
Փեթակի մեջ խոր քուն մտած:

Չեն աշխատի՝ կուշտ-կուշտ կուտեն  
Մեղրի առատ քաղցր հյութից,  
Սուտ քուն կանեն, թե՛ տկար են,  
Կամ թե հոգնած՝ ծանը գործից:

Չեն համբերում մեղուները  
Ու դիմում են արդար դատի.  
Կարգադրում ե մայրիկ մեղուն.  
— «Իտան անել անաշխատի»...

Մի դուք տեսնեք վոնց են տալիս  
Այդ բոռերին ձրիակեր,  
Իսկ բոռերը վոնց են լալիս,  
Իբր իրենք են աշխատել:

Չեն հավատում այդ կեղծ լացին  
Մեղուները արդարադատ,  
Հա քաշում են, տալիս լանջին  
Այդ բոռերին ցեց, անաշխատ:

Լողը, գողը, ձրիակերը  
Բաժին չունի քաղցր բերքից,  
Այդ լավ գիտեն մեղուները  
Ու գալիս են նրանց հախից:

Փոքրիկներին գուրզուրում են,  
Իսկ ծերերին սիրում, հարզում,  
Բաժին տալիս առատ-առատ  
Նստեցնում վերին կարգում։

Մարդուն կտան առատ բաժին  
Իրենց բերքից այդ քաղցրահամ,  
Չե վոր մարդն ե նրանց պահում,  
Վորպես մեղվի լավ բարեկամ։

\*  
\* \*

Կա մի հսկա արհեստանոց,  
Բանվորների մի բրիգադ,  
Մեխող, չափող ատաղծագործ,  
Իսկապես վոր մի մեղվանոց։

Շինում են շատ շրջանակներ,  
Տախտակներ են հա սղոցում,  
Աշխատում են շատ վարպետներ,  
Ի՞նչ ուրախ ե մեղվանոցում։

Մի ուրիշ տեղ մոմ են հալում,  
Ու պատրաստում մոմաթերթեր,  
Իսկ պահեստում նորոգում են  
Մեղրաքամի մեքենաներ։



Մեղվանոցում ընկեր Սենոն,  
Բարակ ցանցը քաշած դեմքին,  
Յեվ ուրիշ շատ մեղվապահներ  
Հերթով դիտում են ամենքին:

Տալիս են նոր մոմաթերթեր,  
Ծուխ են տալիս ծխարանով,  
Յեվ ավերում բոռի ըներ,  
Յերկար ու մեծ սուր դանակով:

Յեթե չունես ցանց քո դեմքին  
Յեվ ծխարան փուքսի նման,  
Կամ թե սև շոր կա քո հագին,  
Չմոտենաս դու փեթակին:

Զայրանում են գույներից սև  
Ու խմբերով վրա տալիս,  
Հենց այդ պահին ծխարանով  
Մեղվապահը ծուխ ե տալիս:

Յեթե նրանց դեմ զնացիր,  
Չես ազատի դու սուր խայթից,  
Կիլոմետր կուզես վազիր՝  
Չես պրծնի նրանց ճանկից:

Խայթող մեղուն մահանում ե,  
Չեն վախենում նրանք մահից,  
Ազատություն, պատիվ, համայնք,  
Բարձր են դասում ամեն բանից:


Ճանաչում են՝ ով ե գողը,  
Ով ե տերը, ով թշնամին,  
Խիստ կտուժի ստոր գողը,  
Իսկ չեն խայթի բարեկամին:

\* \* \*

Ահա ամռան ուղիղ կեսին  
Մտուցում են մեղրի համը,  
Ու թե լիքն են փոսիկները,  
Մկում են մեղրաքամը:

— ՀԵՅ, դե բերեք բետոնները,  
Փոքը ու մեծ, լայն, հաստափոր,  
Չափեք, լցրեք՝ վորքան տանի  
Քաղցր համեղ լավ մեղրածոր:

Մեղվին առատ բաժին թողեք,—  
Կարգադրում ե ընկեր Սենոն,—  
Վոր մյուս տարի լավ աշխատեն.  
Դա որենք ե, անխախտ կանոն:



Պահեստի մեջ լայն ու արձակ,  
Կենտրոնախույս յերկու տասնչակ  
Գտտվում են, հա պտտվում,  
Մեղք են քամում ջինջ ու հստակ:

— Ընկեր Մարն և դու Պարույր,  
Հաշվեք լիքը բետոնները,  
Շարեք ուղիղ հարյուր-հարյուր,  
Բարձել տվեք ավտոները:

Մնացածը տարեք պահեստ,  
Կշռեք, հանձնեք մեր կոլխոզին,—  
Կարգադրում են նախագահը,  
Մեղրաքամի ուղիղ կեսին:

59986-66  
Մեղքը ծիլ-ծիլ ու պլան,  
Ավտոներով շարան-շարան,  
Տանում են հանք ու գործարան,  
Բաղաք, ավան ու կայարան:

Ամեն մի մարդ, աշխատավոր,  
Խելոք մանուկ, հոկտեմբերիկ,  
Վայելում են առաւ բերքից,  
Բանվոր, գրող ու կոլխոզիկ:



Այս առավետ վոր դուք կերաք,  
Մեղքը համով ու կազզուրիչ,  
Մեր կոլխոզն եր բերել քաղաք,  
Անունն ե՞ «կագանովիչ»:

Ինչ ուրախ ե, ջան, մեր կյանքը,  
Ստեղծել ենք հազար բարիք,  
Շենացել են գյուղ ու քաղաք,  
Ել չկա հոգս, չկա կարիք:

Մեր այս ուրախ կյանքի համար,  
Նամակ գրենք Ստալին պապին.  
«Մենք փոքրիկ ենք ժիր մանուկներ,  
Շուտով կլինենք քաջ պիոներ,


Հետո անվախ ու քաջ հերոս,  
Կամ ողաշու, կամ կապիտան,  
Մենք կլինենք լավ մարտիկներ,  
Իսկ կրծքներիս՝ շքանշան»:

\*

\*   \*

Պատմությունս արգեն պրծակ,  
Արգեն ուշ ե, իմ փոքրիկներ:  
Դե, գնացեք ու քնեցեք,  
Բարի գիշեր, բարի գիշեր:

1938 թ. VIII Կիբովական



Խաբաղիք՝ Հ. Հայրապետյան  
Տեխ. խմբադիր՝ Ան. Գասպարյան  
Ալբաղը Ս. Փարսազոնյան

Գլավլիտի լեազոր՝ Վ.—2080 Հրտա. 4013.

Պատվեր 487. Տիրաժ 3500.

Մեկ մամուլում 24·480 նշան.

Թուղթ 62×94. Տպադր. 1<sup>1</sup>/<sub>4</sub> մամ.

Հանձնված և արտադրության 15 մայիսի 1939 թ.

Ստորագրված և տպագրության համար 22 մայիսի 1939 թ.

Պետհրատի 1 տղարան, Յեղիան, Լենինի 65



7043

402

402 70 4.

